

ՅՈՂՍԵՓ ԷՅԵՆԴԵԱՆՅ

ԵՒ

ՆՈՐԱ ԿՏԱԿԸ.

Սաղաթիէլեան կտակը, զոր նախընթաց ամսաթերթիս մէջ հրատարակեցինք, անտարակոյս երազի պէս բան մը երեւցեր էր մեր ընթերցողաց աչքին՝ անոր գործադրութեանը գեռ 250 տարի ժամանակ մնալուն պատճառաւ։ Բայց ահաւասիկ մէկ ուրիշ էական եւ փառաւոր կտակ մը, որ այժմէն ազգիս սլէսպէս կարօտութեանցը գեղեցիկ նպաստներ կ'հասցընէ, ազգային հոյակապ ուսումնարանի մը եկամուտները կաւելցընէ, ազգիս մէջ եւրոպական գիտութեանց եւ արհեստից ծաւալելուն եւ ընթերցասիրութեան տարածուելուն կօգնէ, որը եւ աղքատ աղջկանց չափաւորապէս բարեբաղդ լինելուն ձեռնառու կլինի, եւ ազգային բարեպաշտութիւնը անվթար պահելու գործնական կերպով բարի օրինակ կուտայ ամենուն։

Այսպիսի է ահա Էյէնդեան կտակը, զոր Կոռնկ ամսագրոյն մէջէն առնելով՝ կ'հրատարակեմք ուրախութեամբ։ Յանկալի էր մեզ մանրամասն տեղեկութիւն ունենալ բարեյիշատակ կտակագրին բուն հայրենեացը, եւ ընդհանրապէս նորա բարուցն ու վարուցը։ Բայց նորա սնած եւ վախճանած տեղերէն շատ հեռու լինելով՝ գոհ լինիմք միայն Կոռնկին տուած տեղեկութիւններովը, որ ասոնք են։

Յովսէփ Յովհաննիսեան Էփէնդեանցը եթէ ոչ ծնեալ՝ գէթ սնեալ եւ ուսեալ կերեւի Աթտէրխանի Աղապապեան Գպրոցին մէջ։ Եւ տոյ անցեր է Տիխիս, Դանձակ, Կարին, Ախալցխա, Տաղստան եւ ուրիշ տեղեր, զանազան պաշտօններով ու վաճառաշուքութեամբ մինչեւ 1844 տարին, յորում Կովկասեան զօրաց պաշար պատրաստելու գործողութիւնը վրան առեր է։ Նորա բարեպաշտ առատաձեռնութեանը յիշատակ է Մցխիթայի հոյակապ եկեղեցին, որոյ շինութեանը համար նուիրեր է 14,000 ըուպլի արծաթ, եւ ներսիսեան Դպրոցին մէջ 1856 թաւականէն ի վեր նորա ծախքովը միշտ մէկ որդեգիր մը կը դատարարակուի եղեր։ Կտակը գրուած է այս տարի օգոստոս ամսոյն մէջ, եւ նոյն ամսոյն 24-ին աւանդեր է Պարոն Էյէնդեանցը իւր բարեսէր հոգին իձեռն Աստուծոյ, որ միայն

գիտէ հատուցանել արդարութեամբ զվարձաբարեաց բարերարաց ամբողջ ազգի մը ներկայ եւ ապագայ սերնդոց։ — Յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի։

Ամենայն գովութեան արժանի է նաեւ Տիխիստու բարեպաշտ ժողովրդեան երախտագիտութիւնը, որով հանգուցելոյն թաղման հանգիսին վազեց ահագին բազմութեամբ եւ բերանալի օրհնութեամբ։ Տարակոյս չունիմք որ Պարոն Էյէնդեանցին պատուական կտակակատարները ամենայն իմաստութեամբ, ճշդութեամբ եւ ազգասիրական ջանքով իգործ կղնեն հանգուցելոյն ըրած կարգադրութիւնը, զգուշութեան համար չմոռանալով երբէք այս ցաւալի եւ անժբխտելի ճշմարտութիւնը՝ թէ ուրիշ շատ եւ մեծամեծ բարերարութիւններ եւս եղած են իկողմանէ ազգասէր եւ բարեպաշտ Հայկազանց, թէ եկեղեցականաց եւ թէ աշխարհականաց, որ կամ նոցա կտակակատարաց անհոգութեամբը, եւ կամ ազգիս բաղդին հակառակող չար կիրքերու արգելք լինելովը անպատու մնացեր են մինչեւ ցայժմ, եւ կամ անիրաւութեամբ յափշտակուեր են յօգուտ օտարաց եւ մասնաւորաց։

ԿՏԱԿ.

« Ես ներքոյ ստորագրեալս՝ Յովսէփ Յովհաննիսեան Էյէնդեանց (Նաղփօրնի Սոյեռնիկ) բնիկ Հաշտարխանցի եւ այժմ Թիֆլիզ վերաբնակեալ, զովս ճիւղացած եւ ցանկալով լցուցանել իմ քրիստոնեական պարտաւորութիւնս, իմ խղճի մտաց ազդեցութեամբ յօժարեցայ, քանի որ միտքս առողջ է եւ յիշողութիւնս հաստատուն, գրել հետեւեալ իմ հոգեւոր Կտակը, որպէս զի իմ մահուանից լետոյ ոչ մի վիճի տեղիք չմնայ, եւ միւս կողմանէ իմ բողոք կաշքս առաւել շահաւոր կերպով ի գործ դրուի։

1) Իմ բողոք կարողութիւնս բոլորն շարժական կաշքերից բաղկանում, եւ է հետեւեալը. տնակոս կամ կարասիք, կառքեր իւրեանց ձիաներովն եւ սարեօք եւ դրամագումար, ըստ մասին առձեռն պատրաստ եւ ըստ մասին բաղկացեալ արքունի սեղանատան (քանկ) եւ մասնաւոր անձանց մօրճակներից։ Այս ամենը մի առ մի եւ պարզաբար գրուած են առանձին հաշուեմատների մէջ, որ եւ իմ ձեռքովս եւ իմ ստորագրութեամբ վաւերացնելից եւ բերբերուիլը նշանակելից լետոյ, պահ եմ տալի Թիֆլիզու պատուաւոր քաղաքացի՝ Աւետիք Բուդղանեան Սվէնիկեանցին, իսկ իմ կնիքս (մօմ) չաճնում եմ իմ կնոջս՝ բնիկ ազնուոնի Նունիկի՝ դստեր Մովսիսի Կորդանեանց։

2) Որովհետև ունիմ ես եւ եղբայր, որ է Կարապետ Էֆենդեանցն, բնակիչ Հաշտարխանու, վասն որոյ հարկաւոր եմ համարում այստեղ պարգաւսնել. բէ ես ինչ կայանք որ բողոնում եմ, բոլորը իմ արդար վաստակն է եւ իմ երեսի քրտնեղով ճարած. իսկ ինչ որ հօրից ու մօրից ժառանգութիւն էր մնացել, այն ամենը արդէն շատ յառաջ ես բողել եմ նորա (եղբորս) համար. բացի սորանից իմ սեպակական փողով Հաշտարխանումը տուն եմ գնել նորա համար եւ նորա անունովն, եւ բողել եմ բոլորովին նորա իրաւանց տակ. նաեւ ամեն անգամ, որքան իմ կարողութիւնս տարել է, օգնել եմ նրան զանազան միջոցներով, որչափ որ նա կարողութիւն է ունեցել: Թէ այս մասին եւ բէ այն մասին, որ նա իմ կայանքի վերայ ոչ մի իրաւունք չունի, ունիմ ես նրանից տուած առանձին ստորագրութիւն 1848 թուականից Մայիսի 1-ից, համարաւ 77. վանքացուցած տեղւոյս հասարակաց գործոց *Նոտարիոսի Մամալարիօնի* ձեռամբ:

3) Նոյնպէս ոչ միայն իմ հօրից ու մօրից ոչինչ ժառանգութիւն չեմ ստացել, այլ ընդհակառակն նրանց վերջին ժամանակներումը պահել եմ, որքան իմ կարողութիւնս տարել է եւ հօրս պարտքը վճարել եմ Պարունքեզեան հանգուցեալ Տէր Յովնանէն քահանային: Վասն որոյ եւ ձեռս սրտիս վերայ գնելով, որոշեցի իմ զբամազութիւնս այսպէս տնօրինել իմ մահուանից յետոյ:

4) Իմ բաղման համար եւ այլ քրիստոնեական ձեռքն իմ մահուանից յետոյ մի տարւոյ միջոցումն կատարելու համար, նշանակում եմ 3000 ռուբլի արծար. այս գումարը յանձնելու է իմ կնոջս, Նունէին, եւ բողնելու է նորա տնօրէնութեան ներքոյ առանց հաշիւ պահանջելու. այս գումարից նոյն իսկ իմ բաղման օրս 500 մանէր բաժանելու է աղքատաց:

5) Իմ կնոջս՝ Նունէի Մովսիսեան Էֆենդեանցին, որ է բնիկ Թիֆլիզցի եւ Դորդանեանց տանից, ինչպէս վերեւն ասուած է, տալիս եմ լիապէս ի վայելս նորա բոլոր իմ տնական կան կարասիքս, նոյնպէս եւ իմ կառքերը ձիաներով եւ սարսօք. բաց յայտնակ տալիս եմ նորան իբրեւ լիովին եւ անզառնալի սեպակաւորութիւն նորա 30,000 ռուբլի արծար. որ եւ միանգամ եւ երբ ընդունելով այս գումարը, մինչեւ ի վախճան պարտի բաւականանալ սորանով առանց վեճ ինչ բաց անելու, նաեւ ոչ իւր բաժինքի փողի մասին, որ ընդ ամենը 1300 մանէր է եղել, եւ այս գումարիս մէջ է պարունակուում: Իսկ այս տունը, որ քաղաքիս առաջին բաժնումն է շինած, որոյ մէջ բնակում եմ իմ կնոջս հետ ի միասին, բոլոր նորա տակը եղած գեանովն, բոլոր շինուածքներովը, բակովն եւ պարտիզովը, բաղկացնում է իսկական սեպակաւորութիւն իմ կնոջս. վասն որոյ եւ ինձանից յետոյ ոչ ոք իրաւունք չունի նոյն տանը եւ նորա գետնի մասին վեճ բանալու:

6) Իմ հարազատ եղբորս՝ Կարապետ Էֆենդեանցին, որին առանց են ալ բաւական օգնութիւն եմ ցոյց տուել եւ այս բոլորն էլ ունայն է անց կացել, տալիս եմ միանգամ եւ երբ 1000 ռուբլի արծար. (*) յոյս ունիմ որ նա ինձի կներէ, որ իս եմ բոլոր կայքս բողնում եմ հասարակօգուտ գործոց համար: Բան է, երբ սա որպիսի եւ իցե զանկատ բաց անէ, իմ կտակակաւորքն ունին իրաւունք, երբ արժան համարին, զրկել նրան եւ այս փողից. որովհետեւ ինձ ցանկալի այն է, որ իմ եղբոր կողմանէ իմ կտակակաւոր-

բաց զուր նեղութիւն չհասնի, նա մանաւանդ որ սոքա իմ կամքը կատար ամելու աշխատութիւնը վիզ կայնելով՝ միայն ազգօգուտ գործոց նպաստում են եւ այս գործումս բարբաւանքն աւել ոչ մի շան բուռն անձնական:

7) Իմ ազգակցիս՝ Սովիկոյ Դամազեանցին տալիս եմ միանգամ եւ երբ 300 ռուբլի արծար:

8) Իմ աներորդւոյն, ազնուատոնմ Սերգեյ Դորդանեանցին բողնում եմ իրա պարտքը 8723 ռուբլի արծար. որ ինձ մուրհակով (քարաք) պարտական է, ուստի այսուհետեւ նորանից բուռն ոչ մի պահանջելիք: Նոյնպէս էլ Դերգոր Կոկորովին, նորա չքաւորութեան պատճառաւ, բողնում 600 ռուբլի պարտքը, որ նոյնպէս հասնելու էր ինձ նորա մուրհակովն:

9) Իմ խոստովանածօրս՝ Մողնու Տէր—Աւետիք քահանային Պօպովեանց կտակում եմ միանգամ եւ երբ 500 ռուբլ. արծ.

10) Որովհետեւ եւ դաստիարակութիւն եմ առել Հաշտարխանու Աղարաբեան դպրոցի հիմնադրի ծախքովն, վասն որոյ ի նշան իմ երախտագիտութեան տալիս եմ 1000 ռուբլի արծար. որպէս զի այս գումարով նոյն դպրոցումն մի մատենադարան (Библиотека) հաստատուի առանկապէս հայերէն գրքերու:

11) Մի եւ նոյն նպատակով եւ նոյնչափ գումար տալիս եմ յօգուտ մատենադարանի Տփլիսու Ներսիսեան Ազգային Հոգեւոր դպրոցի:

12) Նոյն Ներսիսեան Դպրոցի չքաւոր երեսեկ աշակերտաց միճակին վերայ կարեկցութիւն զգալով, նորանց հագուստը նորոգելու համար կտակում եմ միանգամ եւ երբ 600 ռուբլի արծար:

13) Որովհետեւ ամեն Հայի պարտականութիւնն է, որքան իր կարողութիւնը տանում է, պահպանել Հայաստանի հին յիշատակներն, որոնք ամենից լաւագոյն վկայում են մեր քրիստոնեական պայծառութեանը, մեր կենացը եւ մեր ճաշակին. եւ որովհետեւ այսպիսի արժանաւոր յիշատակներից մինն է Երևանից մօտիկ գտնուած Դեղուարդավանքը, որոյ ճանապարհը դժուարագնաց է եւ կառքերու համար անհնարին. վասն որոյ սոյն վանքի ճանապարհը շինելու համար կտակում եմ 2000 ռուբլի արծար. որով երբեանկութիւնը կարելի է հեշտացնել միանգամայն ամենեցունց, նոյնպէս եւ այն ճանապարհորդներու համար, որոնք շատ անգամ զարմացած մնում են այս վանքի շինուածոյ ճարտարակութեանը եւ մեր Հայոց աշխատութեան եւ հաւատոյ պայծառութեան վերայ: Հուսկ ուրեմն որքան գումար որ մնում է (*) բոլորն տալիս եմ յօգուտ Թիֆլիզու Ներսիսեան Ազգային Հոգեւոր Դպրոցի:

14) Յիշեալ դպրոցի համար կտակած գումարս բողնում եմ այն պայմանաւ, որ նորա բերած տոկոսովն դաստիարակութիւն ստանան նոյն դպրոցումը աշակերտներ, առանկապէս Հայոց եկեղեցւոյն պաշտօնեաներ պատրաստուելու նպատակաւ:

15) Այս աշակերտքը, որոնք կոչուելու են իմ անունիս (Էֆենդեանցի) որդեկիրք եւ պիտի ընտրուին չքաւոր Հայերու զաւակներից, առանց ջոկելոյ նոցա ազգատոնմը եւ հայրենիքը, որովհետեւ այս պարագայիս մեջ մարդու բնորոշութիւնն է ամենահարկաւոր պայմանը, իսկ այս

(*) Առանձին յանձնարարական նամակաւ նորան 2000 մանէթ էւ 200 կտակուէ:

(*) Մնացած գումարը, ստույգ տեղեկութ իմ ունիմը, հասնում է մինչեւ 60,000 ռուբլի արծար:

պայմանը ոչ ծագումովն եւ ոչ ծննդեան աշխարհովն չի որոշուիլ :

16) Սրանց միջից առանկ ընտիրները եւ առանկ շնորհալիները ուղարկուին բարձրագոյն ուսումնարաններ եւ սրանց ամեն մէկի ապրուստի համար նոյն գումարի տոկոսիցն տուուայ տարենը 300 ռուբլի արծար :

17) Այս որդեկիրքը ուսումն աւարտելից յետոյ պարտաւոր են, երէ հարկաւոր համարուի, ծառայել Ներսիսեան ուսումնարանումը եւ միւս ծխական դպրոցներումը ուսուցչի եւ վերակացուի պաշտօնով, — երկու տարի ժամանակ միայն Ներսիսեան դպրոցի մէջ ուսում աւարտողներն, եւ չորս տարի ժամանակ — բարձրագոյն ուսումնարաններումը դաստիարակութեանն են : Ով ոք հրաժարի այս պարտքը կատարելուց, պարտական է իր վերայ ծախք եղած գումարի կրկնապատիկը վերադարձրնել, վասն զի այս միջոցը կարեւոր է համարուում արժանաւոր դաստիարակներ յառաջ բերելու համար : Սոյն ուսումն աւարտող որդեկիրներուն յիշեալ պաշտօնները յանձնելիս պէտք է վճարուի մի եւ նոյն ռոճիկը, ինչ որ իրանց պաշտօնի համար ուսումնարաններու կարգադրութեամբ որոշուած լինի :

18) Ուսումնարանի համար կտակած գումարի տոկոսիքից տարեց տարի 500 մանեք գործ դրուի Թիֆլիզու (Հայոց) ծխական դպրոցներումն սովորող աշակերտաց գրեանք, բուղբ եւ գրիչ գնելու համար :

19) Այս գումարի տոկոսիքիցը երկու չքաւոր Հայ տղայք ուղարկուին սահմանից դուրս իմ կտակակատարների անընդմիջական ընտրողութեամբ, որպէս զի Անդրակովկասեան երկիրներումը կարեւոր համարուած որ եւ իցէ ճարտարութիւն եւ արհեստ սովորին, վճարելով նոյն իսկ իմ կտակակատարներու հաճութեամբն նոցա ապրուստի ծախքը, եւ որովհետեւ աշակերտքը այնտեղ որոշեալ ժամանակաւ կարեն ընդունուիլ ձրիապէս, ինչպէս որ այս սովորութիւնը կայ արհեստաւորաց մէջ, ուստի այս վերջին դիպւածութեան տարեկը 200 ռուբլի յետ դրուի այս աշակերտաց ամեն մէկի համար, որ եւ յանձնուի իրանց, երբ վերադառնան Թիֆլիզ, որպէս զի իրանց ձեռնարկութեան համար պէտք ածեն, քի որ իրանց ուսմունքը յաջողութեամբ աւարտած լինին : Այս փողիցը պէտք է դուրս հանել նրանց գնալ գալու ծախքը, չէ պէտք է գրել նոցա այս ճամբու ծախքիցը, քի որ նոցա առանց յաջողութեան վերադառնան, բոտ որում առանց են էլ նոցա համար բաւական կորուստ է իրանց անուամբը տարեց տարի հաւաքուած գումարից գրկուիլը : Հիւանդութեան պատճառաւ վերադառնալը չի գրկում նրանց այս գումարը ընդունելու իրաւունքից : Երկու տղայոց սահմանից դուրս ուղարկելը ամեն անգամ պէտք է կրկնուի, երբ գնացողներն վերադառնան :

20) Երէ որ եւ է արգելք պատահի տղայք սահմանից դուրս ուղարկելու, այն ժամանակը նոյն զրկուողներուն հասանելի տոկոսիքն բողոսի Ներսիսեան ուսումնարանի օգտի համար, նոյն տեղի աշակերտաց բիւն աւելացնելու նպատակաւ :

21) Ներսիսեան դպրոցը եւ վերին ուսումնարաններ մշտնոդ աշակերտաց ընտրութիւնը, նոցա դաստիարակութեան վերայ աջք պահելը եւ կտակած գումարի տոկոսիքի օրինակաւոր գործադրութեան մասին նկողութիւնը յանձնում են իմ կտակակատարներին :

22) Ներսիսեան ազգային Հոգեւոր ուսումնարանը տարին մի անգամ պատարագ մատուցանելու է իմ մեղապարտ հոգեւոյս փրկութեան համար եւ օրհնել տալու է գերեզման :

23) Նոյն ուսումնարանի անունով կտակած գումարս մնալու է նորա իրաւանց ներքոյ, քանի որ այս ուսումնարանը կոչուում է Ներսիսեան Ազգային Հոգեւոր դպրոց, եւ քանի որ ներկայ դրութեանս մէջ մնում է անփոփոխ, այսինքն՝ քանի որ հոգեւոր իշխանութիւնից է կառավարուում ազգի կողմանէ ընտրուած աշխարհականաց գործակցութեամբ, ինչպէս որ այժմ ներկայումս այս կարգը պահպանուում է : Թէ որ այս սկզբունքը որ եւ իցէ պատճառով փոփոխուին, իմ կտակակատարքը, Հայաստանեայց եկեղեցւոյ գլխաւոր տեսչութեան նկատ խորհրդակցելով, կտակած գումարս գործ գնելու են մի այլ դպրոց հաստատելու համար սոյն այս նիւանց վերայ : Որովհետեւ իմ նուէրքի բուն նպատակն է կրթել եւ պատրաստել արժանաւոր պաշտօնեայք Հայաստանեայց եկեղեցւոյ համար : Այս դեպքումս երէ կարծեաց տարբերութիւն ծագի եկեղեցական իշխանութեան եւ իմ կտակակատարաց մէջ, առանկապէս իմ կտակակատարաց կարծիքն ի կատար ածելու է :

24) Որովհետեւ իմ զրամագումարի մեծ մասն գտնուում է զանազան անձանց ձեռին, վասն որոյ երէ կորուստ ինչ պատահի, այս վնասը բաժանելու է ամենի վերայ նոյն չափով, որքան ռուբլուն բաժին հասնի : Բոլոր գումարները երբ հաւաքուին, բացի բաշխելու եւ բաժնելու դրամներից, գնելու է Անդրակովկասեան հասարակաց խնամատարութեան Սեղանատունը (Зак. Приказъ Общ. Призрѣнія) կամ մի այլ սորա նման ապանով տեղ (Учрежденіе), որ տոկոսիք բերի յիշատակեալ հարկաւորութեանց պէտք ածելու համար :

25) Այս իմ կտակագիրս կատար ածելու համար, նոյնպէս եւ իմ ստանալիքներս ժողովելու եւ այնուհետեւ իմ վերջին կամքս կատար ածելու համար ինձ կտակակատար նշանակում եմ Գրիգոր Յովհաննիսեան Խզմիրեանցին (Նոյն-Վօրնի Սուփունիկ) եւ Թիֆլիզու երկու պատաւաւոր քաղաքացիներին՝ Գարրիկ Յովհաննիսեան Տէր Միքայէլեանցին եւ Աւետիք Բուդաբեան Սվէչնիկեանցին, տալով սրանց վրակատար իրաւունք, որ երէ որ եւ իցէ տարակուսութիւն եւ երկմտութիւն ծագի, իրանք ամեն դժուարութիւն լուծեն իրանց խոջմտանքով : Նոյն այս իրաւունքը, քի որ իրանց միջից մէկն [ու մէկին մահ կամ այլ դիպումով պատահի, մին ուրիշին կամ իրանցից մէկն ու մէկին փոխանցելու իշխանութիւնը իրանց բողոսում եմ. նոր ընտրութեանն այս կերպով տեք են դառնում իրանց նախորդի բոլոր իրաւունքներին եւ գործում են այնպէս, ինչպէս որ պիտի գործէին նոյն իսկ կտակակատարքը : Եւ որովհետեւ ամենայն մարդիկ մահկանացու բնութեան ենթարկուած են, վասն որոյ եւ իմ կտակակատարներից կարգուած յաջորդները կարող են իրանց իրաւունքը ուրիշներին փոխանցել, նոյնպէս եւ այս վերջիններս այլոց, եւ այսպէս մէկը միւսին յաջորդաբար, քի որ իրանք այս իրաւունքներն փոխանցելու արտօնութիւնը իրանց նախորդից ստացած լինին : Թէ որ կտակակատարներից մէկն ու մէկը մեռնի առանց այսպիսի տնօրէնութիւն անելու, կենդանի մնացողներն ունին իրաւունք նորա տեղն այլ ոք հրաւիրելու իւրեանց իսկ հաւանութեամբը, քի որ բաւական չհամարին շատանալ կենդանի մնացեալ կտակակատարների բռնովն : Թէ որ պատահի, որ բոլոր կտակակատարքն մեռնին առանց կարգադրութիւն անելու իրանց յաջորդի մասին, այն ժամանակ նոր կտակակատարներ սահմանեալ բռնով ընտրելու են Թիֆլիզու Ներսիսեան Ազգային Հոգեւոր ուսումնարանի հոգաբարձուքը : Վերոյիշատակեալ իմ կտակակատարներին իրաւունք եմ տալիս որոնք եւ նոյնպէս կարեն, քի որ հարկը սպանանք նոյն

իրաւունքը իրանց մահուանից յետոյ ուրիշին փոխանցել խղճմանքով վերջացնելու այն ամէն իմ առեւտրական հաշիւներս, որ ունիմ եւ իմ ընկերներուս հետ, սոցա կարգումըն է նոյնպէս եւ այս 1862 բուին Կովկասեան բանակի զօրացը հացի պաշար հասցնելու մեր ընկերական գործողութեան (обществу) հաշիւը, նոյնպէս եւ Провиантская комиссияի հետ ունեցած հաշիւներս, որոյ հետ իմ ունեցած հաշիւներս առաջուանից իմ վերկալած կապալաութեանց մասին տակաւին մնում են բերակատար, վասն որոյ եւ հարկաւոր եայս գործոց հետեւողութիւն անել վիականոր իրաւունքով եւ պաշտպանել իմ օգուտը, տալով խնդիր եւ զիր ուր տեղ եւ ինչպէս հարկաւոր համարութիւն Այս յիշատակեալ *Ողերացիներէից* ինչ շահ որ դուրս բերուի, բոլորը նոյնպէս ներսիսեան Ազգային Հոգեւոր դպրոցի օգտին դարձնելու է նոյն տեղի որդեգրաց բիւր յաւելացնելու, կամ երկու եւ զոնէ մի աղքատ հայ աղջիկ մարդու տալու համար, ինչպէս պատշաճ համարին իմ կտակակատարքը:

26) Սոյնօրինակ պէտք է վարուիլ, քեզ ուր եւ իցէ ատենական տեղերումն լուս ընկնին գործքեր եւ օրքան փող

զոյանայ այսպիսի գործքերից, բոլորն էլ ներսիսեան ուսումնարանի օգտին դարձնելու է: Վերոյիշատակեալ գումարներու բաժանումը լետ ձգելու է մինչեւ որ բոլոր իմ փողերս ժողովուին. իսկ իմ բաղումի համար նշանակուած երեք հազար մաներն վերկալնելու է առաջին անգամ ստացուած դրամներէից:

27) Իմ պարտքերս, որոնք նշանակուած են իմ հաշուեմատենումը, վճարուելու են առաջին անգամ ստացուած փողերից, նոյնպէս իմ կնոջս Նունէին մինչեւ իմ բոլոր գումարի ժողովուիլը հասցնելու է առաջին անգամ ներս եկած փողերից տասն հազար մաներ. նմանապէս եղբորս Կարապետ Էֆենդեանցին առաջուց տուն եկած փողերից հասցնելու է նրա համար կտակած գումարիս կէսը՝ այսինքն 500 ռուբլի:

28) Ի վերջ ամենայնի այս իմ կտակը իմ խօսքերես գրողին եւ վկաներուս իրաւունք եմ տալիս, ամենայն կտակածանք փարատելու համար, ստորագրել այս իմ կտակագիրս եւ վասերացնել բերբերն:

Օգոստոս 1862 ամի. Բ. Թիֆլիզ: «

Ծ Ի Ա Ծ Ա Ն

Ն Ո Ր - Ե Օ Ր Ք (*).

Նոր-Եօրքը Ատլանտեան ովկիանոսին եզերքէն 50 վերսթի չափ հեռու Հուստոնի գետոյն եւ Քասթրիլը գետոյն բերաններովը ձեւացած կղզիի մը վրայ շինուած է, որ Մանհաթթան կըսուի:

1609-ին Հենրիկոս Հուստոն անունով հոլանտացի քաջահմուտ նաւապետը գտաւ այս կղզին. Հոլանտացիք դաղթականներ յուղարկեցին այն տեղը՝ որ գլխաւորապէս մորթի առուտուր կընէին. եւ նոքա 1615-ին չորս հատ տուն շինեցին այն կղզւոյն վրայ, եւ այն ամենափոքրիկ քաղաքին անունը դրին Նոր-Ամսդերստ: 1652-ին միայն հազարի չափ բնակիչ ունէր այն փոքրիկ Ամսդերտամը, եւ սակայն մորթի վաճառաշահութեանը մեծ լինելուն պատճառաւ՝ Անգղիացի դաղթականներուն նախանձը սկսաւ գրգռել, այնպէս որ 1664-ին եկան Անգղիացիք 4 նաւով ու 500 զինուորով եւ տիրեցին քաղաքին, անունն ալ դրին Նոր-Եօրք: Եւ թէպէտ ինը տարիէն Հո-

լանտացիք ետ առին իրենց հիմնած քաղաքը, բայց նոցա ուրախութիւնը երկար չտեւեց, եւ Անգղիացիք նորէն տիրեցին անոր:

Քանի որ գեռ քաղաքին փողոցները լուսաւորելու սովորութիւնը չէր մտած, եւ բնակիչները 5000 հոգիէն աւելի չէին, քաղաքական կառավարութիւնը հրաման հանեց որ ով որ փողոցի վրայ նայող տուն ունի՝ պատահաններուն մէջ ճրագ դնէ գիշերները, եւ այս հրամանը չկատարողը պարտական էր ամէն մէկ անգամուն 9 փէնտ տուգանք վճարել: Յետոյ հրաման եղաւ որ փողոցներուն մէջ լապտերներ կախուին, ամէն եօթը տան մէկ լապտեր, եւ ծախքը այն եօթը տան տէրերը հատուցանեն: 1725-ին սկսաւ հրատարակուիլ Նոր-Եօրքի առաջին լրագիրը:

Անգղիոյ տէրութեան կառավարութեան մեծամեծ տոգոհութիւններ ունէին Նոր-Եօրքի բնակիչները, վասն զի իրենց վաճառականութեանը ծաղկելուն արգելք էին Անգղիացւոց դրած օրէնքները, ուստի 1763-ին

(*) Տես ամսագրոյս նախընթաց քերքը, էջ 251: